

Դավիթ Ռ. Մոսինյան  
Փիլ. գիյր. թեկնածու

## ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ\*

**Բանալի բառեր** – պատմություն, անցյալ, ներկա, պատմության փիլիսոփայություն, գիտակարգ, հնարավորություն, պատմական գործընթաց, զարգացում:

### Մուտք

**Առաջին հայացքից պատմության փիլիսոփայության հնարավորության հարցի բարձրացումը կարող է ավելորդ թվալ, քանզի վաղուց արդեն այդ ոլորտում կատարվում են ուսումնասիրություններ, հրատարակվում են մենագրություններ ու դասագրքեր:**

Սակայն միայն «պատմության փիլիսոփայություն» խորագրով աշխատություններին հղելը բավարար չէ պատմության փիլիսոփայության հնարավորության հարցից հրաժարվելու համար, քանզի հազար ու մի սուբյեկտիվ իրողություններ են ենթադրվում այդ աշխատությունների հետևում: «Պատմության փիլիսոփայություն» եզրույթն առաջինը գործածել է Վոլտերը (կարծիք կա, որ անգամ այդ վերնագրով աշխատություն է գրել, որը չի հասել մեզ)՝ նկատի ունենալով պատմության քննական շարադրանքը, սսել է թե՛ ողջախոհության հսկիչ-հարցադրումներով ուղղորդվող պատմագիտական հետազոտությունը:

Մյուս կողմից՝ հարցի լուծում չէ նաև **պատմության փիլիսոփայություն գիտակարգի** պատմության ներկայացումը, քանի որ, **նախ**, «պատմության փիլիսոփայություններն» այնքան տարբեր են, որ լոկ վերապահումով կարող ենք խոսել դրանք միավորող ընդհանուր հասկացության մասին, **երկրորդ**՝ կանխավ կարելի է ենթադրել, որ պատմության փիլիսոփայությունը կոչված է պատասխանելու պատմության՝ ինչ լինելու հարցին, ուստի ինչպես է հնարավոր վստահ լինել, որ ներկայացվածը **պատմություն** է, այլ ոչ թե կամայական ինչ-որ հատույթի կամ պահի սուբյեկտիվ ամրագրում:

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 07.11.2017:

## 1. Պատմություն և պատմության փիլիսոփայություն

Պատմության փիլիսոփայության հնարավորության հարցը վերջին հաշվով վերաբերում է այն պայմաններին, որոնց առկայությամբ է ըմբռնվում **պատմության փիլիսոփայությունը՝ իբրև գիտակարգ**: Այդ հարցը **տրամաբանորեն** նախորդում է պատմության փիլիսոփայության՝ որպես պատմական փաստի, իրողությանը: Հակառակ պարագայում այդ գիտակարգի պատմությունը կնմանվեր անիմաստ հույունքսխաղի, որի ոչ միայն վերջը կանխատեսելի չէ, այլև ընթացքը՝ գնահատելի: Ավանդ, եթե ժամանակին մաթեմատիկոսներից վերցված և փիլիսոփայության մեջ ավանդույթի ուժ ստացած դիրքորոշումը փոխադրենք պատմության փիլիսոփայության ոլորտ՝ թե պատմության փիլիսոփայությունն այն է, ինչով զբաղվում են պատմության փիլիսոփաները, այստեղ այն չի գործի մի «անփոյալ» հարցի պատճառով. **իսկ ինչով է զբաղվում պատմության փիլիսոփան**: Եվ, ի դեպ, հարցի պատասխանը բնավ շահեկան չի լինի, եթե հարցը հասցեագրված լինի պատմաբան մասնագետին:

Ուրեմն ինչն է անհրաժեշտ պատմության փիլիսոփայության լինելիության համար: Այս ուղղությամբ գործադրված ջանքերը երբեմն վերաբերել են գիտակարգի հասկացությանին ապարատին (դա բնորոշ է հատկապես ռուսական մտքի ավանդույթին՝ Վլ. Սոլովյով, Լև Կարսավին, Ա. Լոսև և այլք), երբեմն՝ հետազոտության մեթոդներին (սորկանտականություն), իսկ երբեմն էլ առարկային և մտածողության առանձնահատկություններին (Ռ. Քոլլինգվուդ):

Առաջին դեպքում մատնանշվել են այն հասկացությունները կամ կատեգորիաները, որոնցով գործառում է պատմության փիլիսոփայությունը: Այդ հասկացությունների շարքը համալրում են **գարգացումը, լինելիությունը, շարժումը, պատմական գործընթացը** և այլն<sup>1</sup>: Ավելին, դրանք ուղեկցվում են հիմնավորումներով, գործօրինակ, «եթե պատմությունը գարգացում չլիներ, այլ ընդամենը միմյանց հետ միայն արտաքնապես կապված երևույթների հերթափոխություն, ապա պարզ է, որ հնարավոր չէր լինի խոսել որևէ ընդհանուր նպատակի մասին»<sup>2</sup>: Այստեղ, սակայն, թաքնված է մի վտանգ, որը հիշեցնում է հայտնի կատակը, երբ հաճախորդի խնդրանքին, որ իրեն գազով ջուր տան, վաճառողը հարցնում է՝ օշարակո՞վ, թե՛ ոչ, և բացասական պատասխան ստանալով՝ երկրորդ հարցն է տալիս, թե՛ առանց դր օշարակի: Արդ, չլինի, թե այդ հասկացությունները հորինված են ոչ մի բան մտածելու համար, ինչպես որ ոչ վաղ անցյալում կային փիլիսոփայությունը նկարագրող բազում հասկացություններ, ավելի ձիշտ՝ բառեր, բայց չկար բուն փիլիսոփայությունը: Էլ ավելի անհասկանալի են բաղենյան դպրոցի նկրտումները՝ մեթոդներ մոգոնել պատմաբանի համար. չէ՞ որ պատմաբանը գիտի, թե ինչ է պատմությունը, քանի դեռ հարց չի հղացել այդ մասին, կամ

1 Տե՛ս, օրինակ, **Лосев А. Ф.**, Античная философия истории. М., «Наука», 1977, էջ 3-9: [**Losev A. F.**, Antichnaya filosofiya istoriya. M., «Nauka», 1977, p. 3-9].

2 **Սոլովյով Վլ.**, Ներամբողջական գիտելիքի փիլիսոփայական հիմունքները: Թարգմ.՝ **Դավիթ Մոսինյանի**: Եր., «Լուսարաց», 2013, էջ 13-14: [**Solovyov V.**, Neramboğžakan gitelikli pilisopayakan himownkner: Targm.- **Davit Mosinyani**: Yer., «Lowsabac», 2013, p. 13-14].

առավել խորքային՝ «պատմաբան լինելուն խանգարում է պատմությունը»<sup>3</sup>: Պատմաբանին մեթոդ տալ ուսումնասիրություն կատարելու համար նույնն է, թե հազարտնուկին քայլաշար տալ տեղից տեղ շարժվելու համար:

Իսկ ինչ–որ պոպպերական մտածող կարող էր հիշեցնել մեզ, թե փիլիսոփայության մեջ առհասարակ ուսումնասիրվում են հարցերը, ոչ թե առարկաները, ընդամին, ի տարբերություն գիտական նկարագրողական հարցերի, փիլիսոփայական հարցերը նորմատիվ են, և ուրեմն կարիք չկա սխոլաստիկական վեճեր ծավալելու. կա հարցը, և վերջ, հարկավոր է գտնել դրա պատասխանը: Իսկ թե մինչև ուր կարող են հասնել այդ հարցերը, և ինչ կարելի է ակնկալել դրանցից՝ մնում է առկախված: Ասենք՝ «կարո՞ղ է չար ոգին նպաստել պատմության զարգացմանը» պակաս սկզբունքային հարց չէ, բայց սրան տրվող պատասխանները դժվար է անգամ պատկերացնել, թե որքան անհեթեթ կլինեն:

Պատմության փիլիսոփայության բնութագրի առումով, իհարկե, կարելի է ընդունել, որ պատմության փիլիսոփայությունը երկու կարևոր յուրահատկություն ունի՝ **համընդհանրականությունը** և **մտահայեցողականությունը**<sup>4</sup>, բայց այս դեպքում շատ բան չենք ասել այդ ոլորտի մասին, և հետո ստացվում է, թե հստակ գիտենք կամ որոշակիորեն տրված է պատմության փիլիսոփայությունը, և այդ առանձնահատկությունները դասագրքային ձշմարտություններ են: Սակայն եթե **պատմության փիլիսոփայությունը** ավարտուն, որոշակիորեն տրված լիներ, դրան վերաբերող թերևս բոլոր հարցերը հոգս կցնդեին, փոխարենը ինչ–որ մի գիրք մատնացույց կարվեր և կասվեր՝ **ահա՛ պատմության փիլիսոփայությունը**:

Պատմության փիլիսոփայության հնարավորության հարցը հաճախ շրջանցվում է, որովհետև ենթադրվում է, թե իբր դրա լինելությունն անկասկած է, այլ խնդիր է, որ օդում կախված է մնում դրա հավաստիության հարցը, իսկ լինելությունը պայմանավորված է առարկայի տրվածությամբ: Սակայն հենց այստեղ է հիմնական խնդիրը. **ո՞րն է պատմության փիլիսոփայության առարկան**:

Առաջին արձագանքը այս հարցին, կարծես, պիտի լինի, որ **պատմության փիլիսոփայությունը գիտակարգ է, որի առարկան պատմությունն է և որի նկատմամբ այն իրականացնում է փիլիսոփայական անդրադարձ**: Բայց այստեղ ի հայտ են գալիս մի շարք հարցեր, որոնց պատասխաններն են որոշակիացնում պատմության փիլիսոփայության ճանաչողական հորիզոններն ու հավակնությունները. ո՞ր պատմության նկատմամբ է անդրադարձը՝ պատմության որպես իրողություններին, թե՛ պատմության որպես այդ իրողությունների մասին շարադրանքի: **Նախ՝ ո՞րն է պատմության լինելության կերպը. այն կա, գոյություն ունի պատմաբանի գրելուց առաջ, թե՛ հետո**: Եթե առաջ, ինչո՞ւ կամ ինչպե՞ս են նույն թեմայի վերաբերյալ գրվում տարբեր, իսկ երբեմն էլ արմատապես հակադիր տեքստեր: Եթե հետո, ապա ինչո՞վ են տարբերվում պատմաբանի տեքստ–

3 Սվասյան Կ., Ոգու գիտությունները առանց գիտության և ոգու: Հոդվածներ, Եր., «Անտարես», 2014, էջ 246: [Swassyan K., Vogh gitowtyownner aranc gitowtyan ev vogov: Hodvacner, Yer., «Antares», 2014].

4 Տե՛ս Գևորգյան Հ., Փիլիսոփայություն. պատմություն. մշակույթ: Եր., «Գիտություն», 2005, էջ 267: [Gevorgyan H., Pilisopayowtyown. patmowtyown. mšakwyt: Yer., «Gitwytown», 2005].

տերը պատմավեպ գրողի տեքստերից: Այլ կերպ՝ եթե սկզբից կա պատմական իրողությունը, որի վրա կառուցվում է պատմագիտությունը, ուրեմն պատմությունը գիտություն է անցյալի մասին, բայց չէ որ **անցյալը չի տրվում սուբյեկտին որպես անցյալ**, այն միշտ **ներկայանում է**, և «ստացվում է, որ պատմությունը գիտություն է ոչ թե անցյալի կամ անցյալում տեղ գտած իրադարձությունների մասին, այլ ներկայի այն բաղադրիչների մասին, որոնք հղում են անցյալին, իրենցով ներկայացնում են անցյալը»<sup>5</sup>: Սա էլ իր հերթին նշանակում է, որ պատմական իրողությունը կարծես թե բխում է պատմագիտական հետազոտությունից:

Պարզ է մի բան. պատմությունը ոչ միշտ է գոյություն ունեցել, առնվազն՝ ժամանակակից իմաստով ըմբռնված պատմությունը: Պատմությունն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ գիտակցությունն արձանագրում է պատմությունը: Ընդամենը, պատմականորեն առաջին այդօրինակ արձանագրումը եղել է Հին Հունաստանում: Անկախ այն վիճարկելի հարցից՝ հին հույները պատմականության զգացողություն ունեին (Ռ. Քոլլինգվուդ), թե բնավ չունեին (Օ. Շպենգլեր), անկասկած է, որ Հերոդոտոսը «Պատմության» շարադրումով համարվում է պատմահայր: Այստեղ կարևոր է նշել, սակայն, որ Հերոդոտոսն ամենևին էլ հավակնոտ նպատակներ չէր հետապնդում. ի վերջո, նա բացառապես փորձում էր սոռագությունից փրկել հույն-պարսկական պատերազմի մանրամասնությունները: Եվ Հին Հունաստանի համակողմանի պատմագիտական հետազոտությունն անհերթեթ գաղափար էր հույների համար, քանզի պատմությունը համարվում էր որոշակի իրադարձությունների գրառում, իսկ դա առանձնակի հմտություն չէր պահանջում:

Արիստոտելը, «Պոետիկա»-ում համեմատելով պատմությունն ու պոեզիան, գրում է. «Պոետը և պատմաբանը տարբերվում են միմյանցից ոչ նրանով, որ մեկը չափածո էր գրում, մյուսը՝ արձակ: Հերոդոտոսի երկը կարող է դրվել չափածո ձևի մեջ և, այնուամենայնիվ, դա կմնա որպես պատմական գործ՝ լինի չափածո, թե արձակ: Իսկական տարբերությունն այն է, որ մեկը պատմում է իրապես կատարվածը, մյուսը՝ թե ինչ կարող էր կատարվել: Ուստի պոեզիան ավելի փիլիսոփայական ու խորն է, քան պատմությունը. քանի որ պոեզիան միտված է արտահայտելու ընդհանուրը, իսկ պատմությունը՝ մասնավորը»<sup>6</sup>: (Դեռևս փակագծերում նշենք, որ այսքանից արդեն պարզ է, թե ինչու Արիստոտելի նման համակարգային մտածողը չունի պատմության փիլիսոփայության հայեցակարգ): Ահա, ուրեմն, քանի որ պատմությունը գործ է ունենում ոչ թե գոյության ընդհանուր օրենքների, այլ եզակի, իսկ հաճախ էլ պատահական իրադարձությունների հետ, դա հիմք էր տալիս փիլիսոփաներին արհամարհելու պատմությունը: Իսկ Պլատոնը, ինչպես Ռ. Քոլլինգվուդն է նկատում, «գրում է այնպես, կարծես Հերոդոտոսը երբեք չի էլ ապրել»<sup>7</sup>: Պատմության

5 Պետրոսյան Գ., Հոգեբանության պատմության նշանակությունն ու սահմանները, «Բանբեր Երևանի համալսարանի փիլիսոփայություն, հոգեբանություն», 2016, N 2 (20), էջ 51: [Petrosyan G., Hogebanwtyan patmwtayan nšanakwtwywn w sahmanner, "Banber Yerevani hamalsarani. pilisopaywtywn, hodgebanwtywn", 2016, N 2 (20) p. 51].

6 Aristotle, Poetics. The Macmillan Company. Third edition revised. 1902, p. 35.

7 Collingwood R. G., The Idea of History. Oxford University Press. 1992, p. 29.

նկատմամբ մերժողական վերաբերմունքը պայմանավորված էր, մի կողմից, դրանում սկզբունքի, օրենքի, հավերժականի բացակայությամբ, մյուս կողմից՝ այն հանգամանքով, որ հին հունական գաղտնածիսություններում առկա էր կենդանի պատմությունը, որի շարադրումը ու դատողականացումը կենդանին վերածում էր սոսկ սովերի, և դա ինչ-որ առումով նմանվում էր Հերոստրատի տխրահռչակ քայլին: Այս տեսանկյունից հետաքրքրական է այն դիրքորոշումը, որ Հերոդոտոսի և նրա հետևորդների հիմնական մղումը «մարդկությանը աստվածային-հոգևորից անջատելն ու բացառապես երկրայինում տեղավորելն էր»<sup>8</sup>: Իսկ աշխարհիկացման գործընթացը Հունաստանից սկսած ավելի ու ավելի ուժգնացավ (այս վերջին նախադասությունը ոչ թե պատմական փաստի արձանագրում է, այլ ավելի շուտ փիլիսոփայական դիրքորոշում, քանզի առաջին տարբերակում կատացվի, թե պատմության շարադրումով ցույց ենք տալիս պատմության հեղիեղուկ լինելը):

## 2. Պատմության փիլիսոփայությունը՝ ինքնանդրադարձ

Այս ոլորտում «աշխարհիկացման» գազաթնակետը, ըստ էության, եղավ պատմականության սկզբունքի (historism) ձևավորումն ու տարածումը տասնիններորդ դարում: Այս պարագայում **պատմություն** ասվածն արդեն առանձին իրադարձությունների արձանագրումը չէր, այլ կյանքն իր ընթացքի մեջ հասկանալու միջոց: Ընդ որում, այդօրինակ մտտեցման հիմքերն արդեն մշակվել էին տարբեր գիտակարգերում՝ իմացաբանության մեջ, բարոյագիտության և այլն, իսկ դրա լավագույն դրսևորումը Հեգելի փիլիսոփայությունն էր: Թեև դա զուտ տեսության առումով, իսկ «գործնականում դա դրսևորվեց պատմության՝ որպես առանձին ակադեմիական գիտակարգի առաջացումով»<sup>9</sup>: Եվ ահա այստեղ տեղի է ունենում պատմության «ադամական մեղսագործությունը»։ **Ժամանակին անմեղ փաստագրումներ կատարող պատմությունը հավակնում է ճանաչել ամբողջը և դրա պատճառով վտարվում է «դրախտային հիերարխիայից» ու այսուհետ ստիպված է գտնել իր տեղը այլ գիտակարգերի կողքին:** Իսկ արդյո՞ք այդ գործունեությունն իրականացնելու համար կարիք չկա ներդնելու փիլիսոփայական «գործիքներ»։ չէ որ պատմությունն ինքը ըստ սահմանման չի դիտարկում իր կարգավիճակի հարցը: Պատահական չէ, որ պատմության հենց այս հավակնության ժամանակ էլ երևան եկան պատմության արմատապես տարբեր ըմբռնումներ: Ահավասիկ դրանցից մի քանիսը. «Նրանք, ովքեր Պատմությունը համարում են մասնավոր փաստերի պարզ ամբողջություն, սխալվում են: Նրանք գործնականում կիրառում են մասնավորների հավաքչություն այլ մասնավորների նկատմամբ, որոնք համատեղվում են միայն բարոյական սկզբունքով: Ես ավելի շուտ կարծում եմ, որ Պատմությունն ի զորու է ինքնուրույն վեր բարձրանալ մասնավորի դիտարկումից մինչև իրադարձությունների համընդհա-

8 Штейнер Р., Всемирная история в свете антропософии. М., «Новалис», 2002, с. 90. [Steiner R., Vsemirnaya istoriya v svete antroposofii. M., "Novalis", 2002].

9 Nadel G. H., Philosophy of History before Historicism, "History and Theory", vol. 3, N 3 (1964), p. 291.

նուր հայացք, օբյեկտիվորեն գոյություն ունեցողի մասին գիտելիք»<sup>10</sup> (Լ. Ռանկե), «Այն, ինչը ես կառուցում եմ պատմականորեն, երևակայության արդյունք է, ոչ թե քննադատական մտածողության»<sup>11</sup> (Յ. Բուրկհարդտ), «Պատմագիտությունը էմպիրիկ ընկալման, փորձի և հետազոտության արդյունք է»<sup>12</sup> (Յո. Դրոյզեն):

Մեջբերումների այս շարքը, անշուշտ, կարելի է շարունակել, սակայն ներկայացվածն արդեն բավական է՝ պնդելու համար, որ պատմության իբրև գիտության կայացման համար առկա են որոշ «հսկիչ» հարցեր, առանց որոնց պատասխանելու հնարավոր չէ մուտք գործել գիտական գիտելիքի ոլորտ, այն է՝ **ինչ է պատմությունը, ինչպես է հնարավոր պատմությունը, իմաստ ունի արդյոք պատմությունը, ավարտվելու է պատմությունը** և այլն: Իսկ սրանք ոչ թե պատմագիտական, այլ փիլիսոփայական հարցեր են: Ստացվում է փակ շրջան. պատմության փիլիսոփայության համար անհրաժեշտ է պատմություն, իսկ վերջինիս լինելության համար՝ պատմության փիլիսոփայություն: Շրջանն էլ ավելի է սեղմվում, երբ նկատում ենք, որ պատմության փիլիսոփայությունները ևս այնքան բազմազան են, որ անգամ դժվար է խոսել պատմության համընդհանուր փիլիսոփայության մասին: Այսպես, օրինակ, պատմություն փիլիսոփայություն ասելով՝ **Գ. Հեգելը** հասկանում է ռեֆլեկտիվ համընդհանուր պատմություն, **Ա. Դանթոյի** համար պատմության փիլիսոփայությունը շարադրական պատմության նախադասությունների վերլուծությունն է՝ դրանց ռելևանտությունը ստուգելու միջոց, ըստ **Կ. Հեմպելի՝** այն պատմության մեջ օրենքներ բացահայտող գիտակարգ է և այլն: Ստեղծված իրավիճակը կարգավորելու ուղիներից մեկն առաջադրել է **Հ. Ուայթն** իր «Մետապատմություն» աշխատության մեջ՝ փորձելով առանձնացնել զուտ պատմական տեքստը սուբյեկտիվ ու տրոպաբանական բաղադրիչներից և պատմության պատմությունը շարադրելու միջոցով ներկայացնել բուն պատմական գիտելիքը<sup>13</sup>: Այստեղ մանրամասն չքննարկելով Հ. Ուայթի մոտեցումը՝ արժե միայն նշել, որ նրա աշխատությունը ևս շարադրված է ինչ-որ տրոպով (հեզնանքով) և, հետևաբար, ևս զուտ պատմական չէ:

Եթե շարունակենք մեր մտքի տրամաբանական ընթացքը, պիտի նկատենք, որ նախնական ենթադրությունը, թե պատմության փիլիսոփայությունը փիլիսոփայական անդրադարձ է պատմության նկատմամբ, այնքան էլ հետևողական չէ, քանզի պատմությունն առկա չէ նույն իմաստով ինչ որ բնությունը: Ուստի պատմության փիլիսոփայությունը բնության փիլիսոփայության կաղապարով կառուցարկելու ջանքերը դատապարտված են անհաջողության. բնությունն ու պատմությունը բացառում են իրար: Բնության և պատմության (կամ ոգու) բաժանման առումով հեգելյան փաստարկները բավարար չափով հիմնավոր են կարծես չներկա-

10 Մեջբերված է ըստ՝ **Pachter H. M.**, Defining an Event: Prolegomenon to Any Future Philosophy of History, "Social Research", Vol. 41, No. 3 (Autumn 1974), p. 444.

11 The Letters of Jacob Burckhardt. Translated by **Alexander Dru**, London: Routledge and Kegan Paul, 1955, p. 21.

12 **Droysen J. G.**, Grundriss der Historik. Leipzig, 1882, S. 8.

13 Առավել մանրամասն տես **Սոսիսյան Գ.**, Հայրեն Ուայթի մետապատմության գաղափարը լեզվաբանական շրջադարձի համատեքստում. «ՎԷՄ», N 1 (53), հունվար-մարտ, 2016, էջ 11-18: [**Mosinyan D.**, Hayden White metapatmowtyan gagapxar lezvabanakan šřjadarji hamatekstowm. "Vem", N 1 (53), hownvar-mart, 2016, p. 11-18].

յացնելով դրանք: Ընդամենը նշենք, որ բնության մասին ոգու դիտանկյունից խոսելով՝ սուկ ծանրաբեռնում ենք **այստեղ և հիմա տրված բնությունը**, իսկ պատմությունն իր հերթին ոգու ստեղծագործության արդյունք է ամեն դեպքում, քանի որ **պատմական ռեալությունը** ներկայացնելիս միջնորդավորվում է որոշակի չափանիշ-սկզբունքով: Այլ կերպ՝ «ի տարբերություն բնագետի, պատմաբանն ընդհանրապես չի զբաղվում իրադարձություններով որպես այդպիսին: Նա զբաղվում է միայն այն իրադարձություններով, որոնք մտքի արտաքին արտահայտություն են... Ըստ էության, նա զբաղված է սուկ մտքերով»<sup>14</sup>:

**Եվ, ուրեմն, պատմության փիլիսոփայությունը ոչ թե անդրադարձ է արդեն եղածի նկատմամբ, այլ ավելի ստույգ՝ ինքնանդրադարձ է:** Պատմագիտությունն ու պատմության փիլիսոփայությունը, ի վերջո, կայանում են այն ժամանակ, երբ պատասխանում են «ինչ է պատմությունը», կամ ինչը պատմություն ունի հարցին... «Պատմական պրոցեսն ինքնին մտքի պրոցես է, և այն գոյություն ունի լոկ այնքանով, որքանով դրանում մասնակցող գիտակցությունը գիտակցում է իրեն որպես դրա մաս»<sup>15</sup>: Այսինքն, պատմաբանն էլ իր հերթին գործ ունի ոչ թե անցյալի իրադարձությունների հետ (քանզի դրանք արդեն գոյություն չունեն որպես այդպիսին), այլ գիտակցության հետ, որը մտածում է այդ իրադարձությունները: Պատմությունը սուբյեկտին տրված չէ ուղղակիորեն, և պատմության շարադրումը պարզ արձանագրություն չէ: Պատմաբանն ու պատմությունը գոյություն ունեն միմյանց շնորհիվ:

Այս առումով և այս համատեքստում պարզ է դառնում, որ պատմության փիլիսոփայությունը ավելի շուտ աշխարհայացքի ոլորտի կազմավորում է, քան բուն պատմական հետազոտության<sup>16</sup>, ուստի բնավ կախված չէ պատմության հնարավորությունից, այլ ունի որոշակի ինքնաբավություն: **Գրել պատմության փիլիսոփայություն՝ նշանակում է խոսեցնել անցյալը ներկայում, առավել կանխատեսելի դարձնել ապագան և այդպիսով հնարավոր դարձնել ողջ պատմական ժամանակի հասկացումը:** Պատմության փիլիսոփայությունը որպես ինքնանդրադարձ պահանջում է սուբյեկտից անդրանցել սեփական գիտելիքի սահմանները, մասնակցել պատմության առաջացմանը, ուրվագծել երազանքներ, իսկ այդ երկարատև ճանապարհի մեկնարկը սկսվում է պատմության՝ ինչ լինելու հարցադրումից:

**Դավիթ Ռ. Մոսինյան** – գիտական հետազոտությունների բնագավառները՝ պատմության փիլիսոփայություն, մշակույթի փիլիսոփայություն, գիտության մեթոդաբանություն, կինոյի նշանագիտություն:

14 Collingwood R. G., op. cit., p. 217

15 Ibid., p. 226

16 Տե՛ս Troeltsch E., Der Historismus und seine Probleme. Tübingen, 1922, S. 11.

## Summary

### THE PROBLEM OF POSSIBILITY OF PHILOSOPHY OF HISTORY

Davit R. Mosinyan

**Key words** – history, past, present, philosophy of history, discipline, possibility, historical process, development.

The problem of possibility of philosophy of history is ultimately related to those conditions in which the philosophy of history is thought to be a scientific discipline. This issue logically precedes the philosophy of history as a historical fact. So the main question here is what is the subject of philosophy of history: on the one hand, it studies history, but on the other hand, history seems to be possible through the philosophy of history. The main thesis of this article is that history did not always exist, at least, history in the modern sense. So, the philosophy of history is not a reference to what has already happened or history itself, but rather is a reflection to itself, which in turn means that the philosophy of history exists independently of history and is most connected with the worldview..

## Резюме

### ПРОБЛЕМА ВОЗМОЖНОСТИ ФИЛОСОФИИ ИСТОРИИ

Давид Р. Мосинян

**Ключевые слова** – история, прошлое, настоящее, философия истории, дисциплина, возможность, исторический процесс, развитие.

Проблема возможности философии истории в конечном счете связана с теми условиями, при которых философия истории считается научной дисциплиной. Этот вопрос логически предшествует философии истории как исторического факта. В этом контексте главным вопросом становится проблема предмета философии истории: с одной стороны она изучает историю, но с другой стороны, история, кажется, возможна с помощью философии истории. Основной тезис этой статьи состоит в том, что история не всегда существовала, по крайней мере, история в современном смысле. А это значит, что философия истории – это не рефлексия на то, что уже произошло или на саму историю, а рефлексия на самого себя, что, в свою очередь, означает, что философия истории существует независимо от истории и более всего связана с мировоззрением.

ՀԻՄՆԱԳԱՐԿ

17 (ժԵ) ցարր, թիվ 4 (60), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2017

ՀՀՎ համահայկական հանրեւ